

Հաստատում եմ՝
ԵՊԼՀ ռեկտոր՝

-----Ս. Զոլյան

“-----”-----2011թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆԻ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Երևանի պետական լեզվաբանական համալսարանի (այսուհետև՝ ԵՊԼՀ) Արևելյան լեզուների ամբիոնը (այսուհետև՝ ԱԼԱ) հանդիսանում է ԵՊԼՀ ինքուրույն ստորաբաժանում, որն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, ԵՊԼՀ կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:
- 1.2. Սույն կանոնադրության մեջ փոփոխություններ կատարվում են ԵՊԼՀ ռեկտորատի որոշմամբ:
- 1.3. Ամբիոնը ղեկավարվում է ԵՊԼՀ խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի որոշումներով, ռեկտորի հրամաններով,
- 1.4. Ամբիոնը վերակազմակերպվում կամ լուծարվում է ԵՊԼՀ ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊԼՀ ռեկտորատի որոշմամբ:

2. ԱԼԱ խնդիրները

- 2.1. Խթանել արևելյան լեզուների ուսուցումը ԵՊԼՀ-ում, ուսանողների հետաքրքրությունն ուղղել դեպի Արևելքի մշակութային արժեքները:
- 2.2. Առավել արդյունավետ ուսումնական գործնթաց իրականացնելու նպատակով մշակել և կազմել համապատասխան ուսումնամեթոդական նյութեր և ծրագրեր:
- 2.3. Նպաստել ամբիոնի աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացմանը, կազմակերպել համապատասխան մասնագիտական դասընթացներ և ուսուցողական այլ միջոցառումներ:
- 2.4. Աջակցել ԵՊԼՀ համագործակցությանը Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա դեսպանատների և արտերկրյա կրթական և գիտական հաստատությունների հետ:

3. Ամբիոնի գործառույթները

- 3.1. Պլանավորել և իրականացնել գիտահետազոտական ուսումնասիրություններ արևելյան լեզուների և մշակույթների ոլորտներում:
- 3.2. Կազմակերպել համապատասխան ուղղվածություն ունեցող սեմինարներ և քննարկումներ, մասնակցել հանրապետական և միջազգային քննարկումներին և գիտաժողովներին:

- 3.3. Համագործակցել այլ գիտական կենտրոնների և համալսարանների հետ աշխատանքների արդյունավետ կատարման, ինչպես նաև փորձի փոխանակման նպատակով:
- 3.4. Գիտա-ուսումնական կապեր հաստատել Հայաստանի և արտերկրի կրթական հաստատությունների հետ:

4. Ամբիոնի կառուցվածքը և ղեկավարումը

- 4.1. Ամբիոնի աշխատանքները համակարգվում են գիտության և միջազգային կապերի գծով ԵՊԼՀ-ի պրոռեկտորի կողմից:
- 4.2. Ամբիոնի վարիչը նշանակվում և ազատվում է աշխատանքից ԵՊԼՀ-ի ռեկտորի հրամանով:
- 4.3. ԱԼԱ հաստիքակազմը ձևավորվում է ԵՊԼՀ ռեկտորի հրամանով:
- 4.4. ԱԼԱ-ի վարիչը.
- կազմակերպում է ամբիոնի գործունեությունը և ապահովում հիմնական աշխատանքների արդյունավետ կատարումը,
 - կազմակերպում է համագործակցությունը այլ գիտական հիմնարկների հետ,
 - իր լիազորությունների սահմաններում հանձնարարականներ է տալիս ամբիոնի աշխատակիցներին,
 - կազմակերպում և վերահսկում է ամբիոնի գործավարությունը,
 - պատասխանատվություն է կրում ամբիոնի աշխատանքների որակի, խնդիրների և գործառույթների պատշաճ կատարման համար,
 - մշակում և ռեկտորատի ամենամյա հաստատմանը ներկայացնում հեռանկարային ծրագրերը,
 - ամբիոնի վարիչը հաշվետու է համալսարանի ռեկտորին:

5. Ամբիոնի գույքը և միջոցները

ԵՊԼՀ-ն ամբիոնին ապահովում է համապատասխան աշխատանքային տարածքով, գույքով, սարքավորումներով:

Ամբիոնը օգտվում է համալսարանի գրադարանային ֆոնդից և էլեկտրոնային ռեսուրսներից:

Ամբիոնի վարիչը պատասխանատու է ամբիոնին հատկացված գույքի և սարքավորումների համար: